Հաստատում եմ

Տնօրեն՝ Ա.Գրիգորյան

Աշխատանքային տարեկան պլան

<<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց>>

ՊՈԱԿ-ի

2023—2024 ուստարվա

Մասնագիտացված կրթական

աջակցությունների գծով տնօրենի

տեղակալ

Փոխտնօրեն՝ Լ.Գաբրիելյան

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Ապահովել ուսուցիչների կողմից կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր, նվազագույնի կատարումը (սովորողների ուսումնական ծավալը),շրջանավարտներին ներկայացվող պահանջները:

   Այդ նպատակով կազմակերպել.

   ա) ամենամսյա ստուգումներ

   բ) քննարկումներ

   գ) առաջավոր փորձեր (հայոց լեզու, մաթեմատիկա առարկաներից):

2. Կազմակերպել սեմինար պարապմունքներ բոլոր մեթոդմիավորումներում՝ կապված ծրագրային և թեմատիկ նորությունների, դասապրոցեսի դեմոկրատացման և ինտենսիվ մեթոդների կիրառման հետ:
3. Ինտերնետային ռեսուրսների միջոցով ապահովել տեղեկատվության ազատ և բաց մուտքը դպրոց:

   Համակարգչի կիրառումով առավել ամբողջական և հետաքրքիր դարձնել դասապրոցեսը, հատկապես մաթեմատիկա, մայրենի առարկաների:

4. Արտադպրոցական դաստիարակությունն իրականացնել մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոնների, մարզադպրոցների, երաժշտական դպրոցների ու կրթօջախում գործող խմբակների միջոցով:

ՄԿԱԳ տնօրենի տեղակալ՝ /Լ. Գաբրիելյան/

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրներն ու բնութագիրը

Ձևավորել համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակույթին և բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ քաղաքացիներ:

Ստեղծել պայմաններ սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության, բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացման, ինքնակրթության և ինքնազարգացման համար: Կազմակերպել միջոցառումներ, որոնք կամրապնդեն սովորողների ֆիզիկական զարգացումն ու առողջությունը, ինչպես նաև կնպաստեն նրանց գեղագիտական, ռազմահայրենասիրական, հոգևոր և հայեցի դաստիարակությանը:

Կրթության բովանդակությունը հարստացնել անձի և քաղաքացու ձևավորմանը միտված ուսումնական նյութերով ու դասընթացներով:

Ստեղծել պայմաններ երեխաների անձնային զարգացմանը, ճանաչողական, գեղագիտական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների բնականոն գործունեության համար, ապահովել կապը ընտանիքի և հասարակության կառույցների հետ:

Միջին դպրոցում ուսումը նպատակաուղղել առողջ ապրելակերպի, աշխարհի ու բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

ՄԿԱԳ տնօրենի տեղակալ՝ /Լ. Գաբրիելյան/

2023-2024 ուստարի

Աշխատանքային դաստիարակություն

Նպատակը՝ Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատարող անձը	Նշումներ կատարման մասին
1.	Աշակերտներին մասնակից դարձնել ծաղկապատման,սերմերի հավաքման, ծաղիկների հերբարիումների պատրաստելու աշխատանքներին:	Գարուն աշուն	Տնօրինություն դասվարներ	
1.1	Հողամասի հողի ավելացում և փխրեցում			
2.	Համադպրոցական շաբաթօրյակներ	Տարվա ընթացքում	Դասվարներ	
3.	Դասասենյակի նախապատրաստումը ձմռանը	Նոյեմբեր	Դասվարներ	
4.	Աշակերտներին մասնակից դարձնել տոնական օրերին դպրոցի զարդարման աշխատանքներին	Դեկտեմբեր	Փոխտնօրեն Դասվարներ	
5.	Աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես	Մարտ	Դասվարներ	
6.	Կլոր սեղան - <<Իմ բակը, իմ շքամուտքը>> թեմայով	Ապրիլ		

2023-2024 ուստարի

Աշխատանք ծնողների հետ

Նպատակը՝ Ամրապնդել դպրոց-ծնող-աշակերտ կապը: Ծնողներին մասնակից դարձնել աշակերտների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին:

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատարող անձը	Նշումներ կատարման մասին
1.	Ապահովել սովորողների ընտանիքների և դպրոցի միջև կապը:	Տարվա ընթացքում	Փոխտնօրեն Դասվարներ	
2.	Հանդիպումներ,զրույցներ:	Տարվա ընթացքում	Փոխտնօրեն Դասվարներ	
3.	Ծնողներին ընդգրկել և մասնակից դարձնել տոնակատարությունների, էքսկուրսիաների կազմակերպման,դասասենյակների նորոգման,խմբակների կազմակերպման մասնագիտական կողմնորոշման հարցերում:	Տարվա ընթացքում	Փոխտնօրեն Դասվարներ	
4.	Ծնողական կոմիտեի նիստերի անցկացում	Տարվա ընթացքում	Փոխտնօրեն Դասվարներ	

2023-2024 ուստարի

Կազմակերպչական աշխատանքներ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատարող անձը	Նշումներ կատարման մասին
1.	Օգնել դասղեկներին՝ կազմելու դաստիարակչական աշխատանքների ծրագրերը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	Օգոստոս	Լ. Գաբրիելյան	
2.	Կատարել միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների հաշվառում:	Սեպտեմբեր	Լ. Գաբրիելյան	
3.	Աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների և հետաքրքրությունների ընդգրկել արտադասարանական և արտադպրոցական խմբակներում:	Սեպտեմբեր	Լ. Գաբրիելյան	
4.	Ուսումնական շենքի յուրաքանչյուր հարկում, բակում, սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն	Տարվա ընթացքում	Լ. Գաբրիելյան	
5.	Ամուր հիմքի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կազմակերպել մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	Տարվա ընթացքում	Լ. Գաբրիելյան	
6.	Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող աշակերտներին, հետևել անհարգելի բացակայություններին	Տարվա ընթացքում	Լ. Գաբրիելյան	
7.	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին	Տարվա ընթացքում	Լ. Գաբրիելյան	
8.	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները: Արդյունքները քննարկել դասղեկների և տնօրինության ընդլայնված նիստում:	Տարվա ընթացքում	Լ. Գաբրիելյան	